

**ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Հիմնաբառեր – գիտելիքահենք տնտեսություն, կրթություն, գիտելիքի օգտագործում, գիտելիքի ինդեքս, սահմանափակ ռեսուրսներ, զարգացման խնդիր, գիտելիքի տնտեսության ինդեքս

Տնտեսական ներուժ, հզորություն, ակտիվություն, գործոններ, որոնք բնութագրում են յուրաքանչյուր պետության զարգացվածությունը և կայունությունը: Գաղտնիք չէ, որ այսօր առավել կայուն և զարգացած են համարվում այն երկրները, որոնք ունեն առավել զարգացած տնտեսություն, տնտեսություն, որի միջոցով կարողանում են բավարարել բնակչության կարիքները: Այսինքն, սահմանափակ ռեսուրսներով բավարարել մարդկային անսահմանափակ պահանջմունքները /տնտեսագիտության հիմնական խնդիրը/:

Տնտեսությունն ամենատարբեր ժամանակահատվածներում ունեցել է ամենատարբեր ուղվածությունները, այլ կերպ ասած մարդկային կարիքները բավարարելու համար օգտագործել են ամենատարբեր մեթոդներն ու միջոցները:

Տնտեսությունը ամենասկզբնական շրջանում ուներ գյուղատնտեսական բնույթ, գյուղատնտեսությունը իր տեղը զիջեց մանուֆակտուրային, որին էլ հաջորդեց արդյունաբերական հեղաշրջումը, կարճ ժամանակ անց անցում կատարվեց դեպի նորագույն տեխնոլոգիաներ և ավտոմատացված համակարգերին:

Այս օրինաչափության մեջ կարելի է առանձնացնել մի քանի դրույթներ.

1. Յուրաքանչյուր փուլից փուլ ընկած ժամանակահատված ավելի կարճ էր, իսկ տված արդյունքները մի քանի անգամ ավելի շատ քան նախորդ փուլում:
2. Յուրաքանչյուր փուլում արտադրվում էր ավելի շատ սպառողական ապրանքներ, դրանց զուգահեռ ավելի արագ աճում էր մարդկային պահանջմունքները:
3. Յուրաքանչյուր փուլում սպառվում էին ռեսուրսներ, որոնք հանգեցնում էին նոր խնդիրների:

Հարկ է նշել, որ վերոնշյալ բոլոր փուլերում փոփոխությունները ուղեկցվել են գիտատեխնիկական հեղափոխությունների հաշվին կամ նրանց անմիջական ազդեցության ներքո:

Տեղի ունեցած գիտատեխնիկական հեղափոխությունների շնորհիվ համաշխարհային տնտեսությունը սկսեց էլ ավելի արագ

զարգանալ՝ տարեց տարի արձանագրելով առավել մեծ հաջողություններ քան նախորդ հարյուրամյակներում կամ հազարամյակներում:

XIX-XX դարերում արագացան համաշխարհային արտադրողական ուժերի զարգացման տեմպերը, ինչի շնորհիվ ավելացավ արդյունաբերական արտադրանքի ծավալը շատ երկրներում: Քանակական փոփոխություններն ուղեկցվում էին տեխնիկայի բուռն զարգացմամբ, որի նորույթներն ընդգրկում էին տրանսպորտի, կենցաղի, արտադրության տարբեր ոլորտները: Առաջացան արդյունաբերության բազմաթիվ նոր ճյուղեր, տեղաշարժեր տեղի ունեցան արտադրողական ուժերի տեղաբաշխման գործում: Նման թռիչքը կապված էր նշված շրջանում իրագործվող գիտատեխնիկական հեղափոխության հետ¹:

Վերոնշվածից կարել է ենթադրել, որ տնտեսության մեջ հետզհետե սկսում էր ամրապնդվել և իր դիրքերը ընդգծել տնտեսություն, որը պետք էր հիմնվեր գիտելիքի վրա: Հետագայում նման տնտեսությունը անվանվեց գիտելիքահենք տնտեսություն կամ գիտելիքի տնտեսություն:

Գիտելիքի տնտեսության տեսական հիմքերը դրել են ավստրիական տնտեսագիտական դպրոցի ներկայացուցիչներ Յոզեֆ Շումպերերը, Ֆրիդրիխ Հայեկը և Ֆրից Մեչլուփը²:

Գիտելիքն առաջին անգամ աչքի ընկնող դիրք գրավեց տնտեսագիտությունում Ֆրիդրիխ Հայեկի՝ 1945թ. «Գիտելիքի օգտագործումը հասարակությունում»³ հրապարակմամբ, որում գիտելիքի՝ որպես ապրանք դիտարկելու երկչոտ փորձ արվեց:

Այսօր էլ կատարվում են ամենատարբեր հետազոտություններ, հրապարակվում ամենատարբեր աշխատություններ, որոնք փորձ են անում բացահայտելու գիտելիքահենք տնտեսության էությունը, տալու նրա ստույգ և սպառիչ բացատրությունը: Սակայն մի բան անհերքելի է, *գիտելիքահենք տնտեսությունը տնտեսության այն մոդելն է որը կարող է որոշակի չափով նպաստել մարդկային բարեկեցության և բավարարվածության մակարդակի աճին*: Գիտելիքահենք տնտեսությունը այն եզակի միջոցն է, որը հնարավոր է օգտագործել անսահմանափակ, և որի օգտագործումը ոչ թե նվազեցնում է նրա քանակը և որակը այլ հակառակը, ավելի է հզորացնում նրա ներուժը:

¹ Տնտեսական պատմություն, Լ. Անանյան, Լ. Պետրոսյան, Երևան 2008թ., էջ 130

² Գիտելիքահենք տնտեսություն, Գ. Վարդանյան, Երևան 2008թ., էջ 27


³ Hayek, F (1945) The Use of knowledge in Society. American Economic Review, XXXV, No. 4; September, 519-30

Այստեղ հարկ է նշել, որը գիտելիքը տվյալ պարագայում դիտարկվում է որպես ապրանք, որից հնարավոր է տնտեսական օգուտներ ստանալ:

Իզուր չէ, որ ակնառու տնտեսագետ Փ. Դրաքերը, ում վերագրվում «գիտելիքի տնտեսություն» բառեզրի տարածումը, համարում է, որ գիտելիքի տնտեսությունը վերաբերվում է գիտելիքի օգտագործմանը՝ տնտեսական օգուտներ քաղելու համար⁴:

Գիտելիքահենք տնտեսության էությունը և ներուժը հասկանալու համար բավական է ընդամենը հպանցիկ հայացք զգել վերջին ժամանակաշրջանում տեղի ունեցող իրադարձություններին և ամեն ինչ պարզ կլինի:

Գիտելիքի դերի մեծացման և նրա օգտագործման ծավալների մեծացման մասին առավել ստույգ պատկերացում է տալիս ԱՄՆ-ի արտոնագրերի և առևտրային նշանի գրասենյակը /ԱՄՆԳ U.S. PATENT AND TRADEMARK OFFICE/, համաձայն հրապարակումների ԱՄՆԳ ընդհանուր առմամբ տրամադրել է 5087834 արտոնագիր որից 2188787 մինչև 2000թ.⁵ /գծապատկեր 1/: Այսինքն ընդհանուր տրված արտոնագրերի 55 տոկոսը տրվել է վերջին տասը տարվա ընթացքում:




Հատկանշական է այն փաստը, որը ի տարբերություն այլ ոլորտների, գիտության ոլորտը անկախ ճգաժամից տարեցտարի

⁴ Druccer P (1969) “The Age og Discontinuity”, Heinemann, London

⁵ Patents By Country, State, and Year - All Patent Types (December 2013) Granted: 01/01/1977 - 12/31/2013 A Patent Technology Monitoring Team Report, www.uspto.gov

արձանագրել է աճ, ինչը խոսում է տվյալ ոլորտի կայունության և արդյունավետության մասին:

Առավել մանրամասն ուսումնասիրելով ներկայացված վիճակագրությունը, այն է ըստ առանձին երկրների /գծապատկեր 2/, հստակ երևում է, որ ստացած արտոնագրերի թվաքանակով անվիճելի առաջատարներ են համարվում այն երկրները, որոնք ունեն զարգացած և կայուն տնտեսություն:



Ցավալի է այն փաստը, որ այսօր Հայստանը ներկայացված աղյուսակում զբաղեցնում է անհամեմատ ցածր դիրք, և ընդհանուր արտոնագրերի մեջ ՀՀ-ի բաժին կազմում է մոտ 0.001 տոկոս, ինչը վկայում է մեծ բացթողումների ու թույլ զարգացած գիտության մասին:

Վերոնշյալի մասին են վկայում նաև համաշխարհային բանկի կողմից ներկայացված գիտելիքի տնտեսության ինդեքսի /ԳՏԻ/ և գիտելիքի ինդեքսի /ԳԻ/ վերաբերյալ հրապարակումները, որտեղ Հայաստանը ևս զբաղեցնում են անհամեմատ ցածր դիրք, իսկ առաջատարներն են կրկին զարգացած տնտեսություն ունեցող երկրները/աղ.1⁶/

⁶ http://info.worldbank.org/etools/kam2/KAM_page5.asp

	Երկիր	ԳՏԻ	ԳԻ	Նորարարություն	Կրթություն	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
1	Շվեդիա	9.43	9.38	9.74	8.92	9.49
2	Ֆիլանդիա	9.33	9.22	9.66	8.77	9.22
8	Գերմանիա	8.9	8.83	9.11	8.2	9.17
22	Ճապոնիա	8.28	8.53	9.08	8.43	8.07
55	Ռուսաստան	5.78	6.96	6.93	6.79	7.16
71	Հայաստան	5.08	4.84	4.21	6.96	3.35

Նման իրավիճակում զարգացնել գիտելիքահենք տնտեսություն կլինի ավելի դժվար, սակայն, եթե իրականացվեն որոշակի քայլեր ապա գիտելիքահենք տնտեսություն ունենալու տեսլականը կարելի է պատկերացնել նաև ՀՀ համար:

Գիտելիքի քահեն տնտեսության զարգացման դերի մասին է խոսում նաև այն հանգամանքները, որ վերջին տարիների ընթացքում զգալիորեն մեծացել են գիտատար ոլորտի թողարկած արտադրանքները, մեծացել է դրանց նկատմամբ պահանջարկը և այդ տենդենցն ունի աճման միտում:

Այսինքն, հաշվի առնելով միայն վերոնշյալները /գիտելիքի տնտեսության զարգացման մասին կարելի է ներկայացնել մի շարք փաստեր/, կարող ենք փաստել, որ ապագան լինելու է գիտությանը: *Գիտելիք-տնտեսություն-ուժ եռամիությունը* տալու իր դրական ազդեցությունը: Այն պետությունը, որը կարողացավ տիրապետի գիտելիքին, առաջ անցնի գիտության ոլորտում, կունենա հզոր և զարգացած տնտեսություն:

Մյուս կողմից գիտելիքի անսահման օգտագործումը տնտեսության մեջ, ինչպես արդեն նշել էինք, բոլորովին էլ չի պակասեցնում նրա դրական և քանակական հատկությունները, ինչպես այլ ռեսուրսների պարագայում:

Առաջ անցնելով, պետք է նշել, որ սա այն հիմնական լուծումն է, որը կարող է ռեսուրսներով ոչ այնքան հարուստ Հայաստանի տնտեսությանը առաջ մղել և ապահովել կայուն ու դինամիկ աճ: Գիտելիքահենք տնտեսությունում ծախսումներ հասկացությունը

փոխարինվում է ներդրումներ հասկացությունով, որը ունի ավելի երկարաժամկետ բնույթ և որի արդյունքում ավելանում է նաև մարդկային բարեկեցության մակարդակը:

Գիտելիքահենք տնտեսության էությունը ավելի լավ ըմբռնելու համար հարկ է նշել համաշխարհային բանկի ինստիտուտի մասնագետների կողմից «գիտելիքի տնտեսությունը» տրված առավել լայն սահմանումը, համաձայն որի՝ Գիտելիքահենք տնտեսությունն այն է, որում կառույցները և մարդիկ ավելի արդյունավետորեն են ձեռք բերում, ստեղծում, տարածում և օգտագործում գիտելիքը՝ տնտեսական և սոցիալական ավելի մեծ զարգացման հասնելու նպատակով: Գիտելիքահենք տնտեսության վերոնշյալ բաղադրիչները կամ չորս հիմնասյուներն են⁷.

- Տնտեսական և ինստիտուցիոնալ ռեժիմ, որն ապահովում է խթաններ՝ գոյություն ունեցող ու նոր գիտելիքի արդյունավետ օգտագործման և ձեռնարկատիրության բարգավաճման համար
- Կրթություն և հմտություններ, որոնք անհրաժեշտ են բնակչությանը գիտելիք ստեղծելու, տարածելու և լավ օգտագործելու համար
- Ընկերությունների, հետազոտական կենտրոնների, համալսարանների, ուղեղային կենտրոնների, խորհրդատվական և այլ կազմակերպությունների արդյունավետ նորաստեղծական համակարգ, որն ունակ կլինի բացահայտելու զուբալ գիտելիքի աճող պաշարը, այն վերափոխելու և հարմարացնելու սեփական կարիքներին և ստեղծելու նոր տեխնոլոգիա
- Տեղեկատվական և հեռահաղորդակցյին ենթակառուցվածք, որն անհրաժեշտ է արդյունավետ հաղորդակցության, տեղեկատվության տարածման ու մշակման դյուրացման համար⁸:

Սրանք այն հիմնական ուժերն են որոնք անմիջապես ազդում են գիտելիքահենք տնտեսության ձևավորման և զարգացման վրա:

Որպեսզի պարզ լինի այն ուղին որով այժմ շարժվում է Հայաստանի Հանրապետությունը բավարար է հղում կատարել վիճակագրական թվերին և հասկանալ թե ինչ վիճակում է գտնվում ՀՀ «գիտելիքահենք տնտեսությունը» և ինչ առանձնահատկություններ ունի այն:

⁷ Գիտելիքահենք տնտեսություն, Գ. Վարդանյան, Երևան 2008թ., էջ 31

⁸ The Knowledge-based Economy. OECD, Paris, 1996, p.7

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Վարդանյանը իր «Գիտելիքահենք տնտեսություն» գրքի մեջ նշում է 6 հիմնական շարժիչ ուժեր գիտելիքահենք տնտեսության համար՝ գլոբալացում և մրցակցություն, տեղեկատվական հեղափոխություն, գիտելիքի հեղափոխություն, համակարգչային ցանցավորում և միացման հնարավորության մեծացում, տեխնոլոգիական փոփոխություններ, փոփոխության երկար ալիքներ:

Սրանք այն հիմնական գործոններ են, որնք առաջ են տանում գիտելիքի տնտեսությունը, նպաստում նրա զարգացմանը: Սակայն, ցավոք պետք է նշել որ այդ գործոնները ՀՀ-ում դեռևս չունեն զարգացման բարձր աստիճան և չեն կարողանում էականորեն նպաստել տնտեսության զարգացման վրա: Բավարար է հղում կատարել աղյուսակ 1-ին և պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունում վերոնշյալ գործոնների զարգացման համար կան շատ անելիքներ: Սակայն այս ամենի մեջ կարելի է փնտրել այնպիսի դրական կողմեր ինչպիսիք են.

- Օգտագործել այլ երկրների փորձը
- Չկրկնել այլ երկրների սխալները
- Օգտագործել արդեն իսկ կատարված ուսումնասիրությունները
- Փորձել լրացնել շուկայում առկա խորշերը /սկզբնական շրջանում/

➤ Արտասահմանում վերապատրաստված մասնագետների փորձը ր գիտելիքները օգտագործել ի նպաստ Հայաստանի

Ի վերջո, պատմության մեջ քիչ չեն այն դեպքերը, երբ մի պետություն մյուս պետություններից ուշ է թևակոխում զարգացման որևէ փուլ և առաջ անցնում բոլորից՝ Ինչպիսիք են ԱՄՆ կապիտալիզմի ժամանկ, Գերմանիան 2-րդ համաշխարհայինից հետո, Ֆրանսիական արդյունաբերական հեղաշրջումը և այլն:

Այսպիսով, Գիտելիքահենք տնտեսությունը ներկայումս այն միակ մոտեցումն է, որը կարող է տնտեսությանը ապահովվել կայուն և դինամիկ աճ: Ստեղծելու նոր աշխատատեղեր, նոր արժեքներ: Մինևույն ժամանկ բարելավելով շրջակա միջավայրը, նվազեցնելով վնասակար գործոնների ազդեցությունը, խնայելով բնական ռեսուրսները:

Իսկ ՀՀ-ի համար ստեղծել անսահման հնարավորություններ զարգանալու, առաջխաղացման ինչու չէ նաև աշխարհին այլ կողմերին ներկայանալու համար:

АННОТАЦИЯ

Нарек Саратикян

СУЩНОСТЬ ЭКОНОМИКИ, ОСНОВАННАЯ НА ЗНАНИЯХ И ЕГО ОСОБЕННОСТИ В РА

Ключевые слова – *Экономический потенциал, стабильность, неограниченные потребности, научно-производственно-образовательный потенциал*

Экономический потенциал, мощьность, активность, факторы которые описывают развитие и стабильность каждого государства. Не секрет, что на сегодняшний день наиболее стабильными и развитыми считаются те страны, которые имеют наиболее развитую экономику, экономику, которое способна удовлетворить потребности населения. Это означает, с помощью ограниченных ресурсов удовлетворить неограниченные потребности человека.

ANNOTATION

Narek Saratikyan

THE NATURE OF KNOWLEDGE BASED ECONOMY AND ITS PECULIARITIES IN RA

Key words – *Economic potential, sustainability, unlimited needs, scientific-production-educational potential*

Economic potential, power, activity: factors that characterize the development and sustainability of each country. It is not secret that today more sustain and developed countries accounted those, which have more developed economy: economy through which they can satisfy the needs of population. So that to satisfy unlimited humanneeds by means of limited resources.